ԿԱՐԾԻՔ

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի[1] 1-ին հոդվածով նախատեսվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-176-Ն օրենքը լրացնել 49.1-րդ հոդվածով, որի 2-րդ մասի համաձայն՝ հաղորդագրություն ուղարկելու համաձայնություն ստացած անձը *պարտավոր է* նախատեսել հասանելի և անվճար միջոցներ ցանկացած ժամանակ համաձայնության հետ կանչելն ապահովելու համար:

Սակայն, Նախագծին կից ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում հաղորդագրություն ուղարկելու համաձայնություն ստացած անձի վերոնշյալ պարտականությունը չկատարելու համար պատասխանատվություն նախատեսված չէ:

Գտնում ենք, որ Նախագծի 1-ին հոդվածով սահմանված 49.1-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է նախատեսել դրանով ամրագրված պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

[1] Այսուհետ՝ Նախագիծ